

ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՆԳԻՄ ՀԱՅԿԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԽԱ. ՊՐԱԿ Գ.

1883

ՅՈՒՆ. ՕԳՈՍՏ. ՍԵՊՏԵՄԲ.

ՀԱՆԴԻՄ ՀԱՅԿԱՐԱՆ

Դ. Լ. ՄԱՐԴՈՎՅԵՎ

ԵՐԵԱՏԱԿԱՐԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ՅԱՅՐԱՐԱՏ

Ես յիշեց Աստուած զնոս և զամենայ գաղանա և զամենայ անառան և
« զամենան թռչուն որ էին ընդ նմա՞ի տուպածի անգ . և ան Աստուած
« հողմ՞ի վերա երկրի . և դադարեց ջուրն . և իցան աղբի ըբ անժառց
« և ասհանք երկնից , և արգելաւ անձնն յերկնից . և զիշանձը տակաւ ,
« երթայր յուրի և թռչունայր յերկրի և նուռաքը յուրն յետ հարիր և
« յիսօն առուք : Եւ նաևաւ տապանն յօհօթներդում ամսեանն ի քան և
« յօհօթն անոյն ի լորին Արաբատոյ » :

ՄԵՆԻՆԴԻՔ . Է. 1-5.

Ա.

Փոխանակ յառաջաբանի :

Ո՞ւմ՞ի մէնջ ոսկի մանկութեան երջանիկ ատենքնը՝ սրտին խորերը ազդած չէ համաշխարհական ջրհեղեղին մեծ պատփառն, որ գծագրուած է հանճարեղ պարզութեամբ Ա. Գրոց բարբառով : Որոց երեսակայութիւնը չէ տատանած Կոյսյ տապանին հետ, անծայր ովկիանոսին ալեաց վրայ, որ կը պատէր զամբողջ երկրագունութը . եր Ա. Գրոց Աստուածն - Ամբաւութիւնց սպառնալից և պատժող ձեռքը,

Պրակ Գ.

և բացուեցան երկնից սահանրն և երկրիս աղբիւրին և կուլ տուին մեր երկիրը : Այդ իսկան մողրակն, զոր Ագովնայի արարշագործ և պատժիչ աջն ձգել էր տարածութեան մէջ միակերպ քառասուն օր և քառասուն գիշեր գանեց անճռել :

Ցետոյ — առաջ կը տանի Ծննդոց Գիրըը — գիտցաւ Արարին իւր արարածոց վրայ, յիշեց զնոյ և ամեն գաղանները և ամեն կենդանինները և թռչունները և սողունները, որոնք Նոյի հետ տապանին մէջ էին, և հանեց հողմ՝ մի երկրիս վրայ . դագրեցան յուրքն և յարձան իրենց տեսները, երկրիս սնդունդներէն ելածները և երկնից սահանրէն իշանները՝ հարիւր յիսուն օր : Եօթ-

13

ներորդ ամսոյն մէջ նոյի տապանն դադրեցաւ Ալրարատայ վրայ: — Ո՞վ չի զիտեր Արտօւածաշնչին հետեւորդ սրտագին բանաստեղծաբար մանր բացատրութիւնքի ջըր-հեղեցէն վերջը Ծուրը կը պակսէր, — ըստ Աստուածաշնչին թուլանայր, — մինչեւ տասներորդ ամիսը: Այս տասներորդ ամսոյն տառաջին օրը, երեցան ջրոց վրայ լերանց գագաթներ: այսինքն միւս այլ լերանց՝ որք քան զԱլյարատ ցածագոյն էին: վասն զի Ալրարատ, ըստ մոտաց Ծննդոց Գրոց հեղինակին, որ Մովսէս ճանչցուած է, Երկրագնտիս բարձրագոյն լեռը կը համարուէր: զի այն ատեն չունեին ճանօթութիւն միւս բարձրագոյն լերանց վրայ, ինչպէս չչալուղի, Տաւալակիրի, Զի Խուլարի և Հսկայադիտակն լվերեսիթի: պէտք է կարծել, որ նոյն խսկ այս լերանց գյուղին վրայ ևս տեղեկութիւն չուներ իսրայելան ազգին ներշնչալ առաջնորդն: — Քառասուն օրէն վերջը, երբ լերանց գագաթունքն երեցան, բացաւ Նոյ տապանին պատուհանը և թռուց ագռաւը, զիտելու Համար թէ քաշուած է ջուրին երկրիս երեսէն: այլ ագռաւը ջարձաւ ՚ի տապան: Ազգաց աւանդութիւնք կը պատմեն, որ ագռաւն թռչելով օդոյն մէջ, տեսաւ երկրիս վրայ շատ մարդկանց և կինդանեաց զիտելու և ճարակիցաւ անսոնցմով: — Այս ատեն Նոյ թռուց ազգանին, զիտելու թէ «ցածուցեալ իցէ ջուրն յերեսաց երկրէ»: այլ աղռաւնին չզանելով հանգիստ, շոր տեղ ոտիցն, որ կարենար թառիլ, ոչ ծառ և ոչ ջրերէն դոյզն ազատ երկիր, զարձաւ ՚ի տապան, «զի ջուր գեւ ունէր զամենայն երեսս երկրի»: Ցայնժամ երկնցուց Նոյ ձեռքը պատուհանէն, ազգանին թառեցաւ ձեռքին վրայ, և Նոյ անդէն ներս առաւ ազանին, Դարձեալ սպասելով իօթն: օր, վերըստին թռուց Նոյ զազաւնին: Երեկիցեան գէմ գարձաւ նաև, ձիթենաւ տերեւած ճիւղէն ի կտցին: «և զիտաց Նոյ, թէ ցածուցեալ էն ջուրին յերկրէ»: Այսպիսի սրտաշարժ բացատրութեամբ կը պատմէ Ծննդոց Գլոբուս՝ հրամիք ազատիկը և յանչուշտ մահուանէն՝ նախաջրէն զեղեւան մարդոյն, և նորա հետ ի միասին կինդանեաց, որք այժմ՝ կը բնակին երկրիս երեսը: Աստուածաշնչնակ տեղը կը ցուցընէ, յոր ապաւինած է մարդն՝ համայնաջինը հեղեցէն ազատելով: այս է Ալրարատ: Այդ յե-

տաջրէն զեղեւան մարդկութեան խանձարուք փափաք ունեցայ տեսնելու, յետ ունելոց երջանկութիւն տեսնելու 1881ին նախաջրէն զեղեւան մարդոյն խանձարուքը, կարելի է զրուցել, խանձարուք մեր այժմեան զիտութեանց, մտաւոր մշակութեանց և լուսաւորութեանց: Ի 1881ին ճանապարհութեցի ի Պարստին, և տեսայան երկրր, ուստի, ըստ վկացութեան Ալրարածոց Գրոց, ստեղծեց Աստուածառաջին մարդը (¹): երկիր՝ զոր կոխեց այն խանձարուքն ոտիւք իւրավք, և թրջեց քրրտամբը, որպէս զի համէ անափ իրեն հաց՝ զինի մեղանչելոյն, և որոյ ծոցը թողուց ապա իւր ոսկերքը Նոյն տարին գնացի և յեգիպտոս, խանձարուքը մերս զիտութեանք դաստիարակեցին Ալրարածոց Գրոց աստուածաշունչ հեղինակը: Յետ Պալեստինու և Եղիպտոսի բնական էր զԱլյարատ տեսնելու փափաքն, Խիոփսի բուրգին վրայ ենելէն վերջը, և ջերմ եռանգով Երուսաղէմը տեսնելէն յետոյ, իւր Գողգոթայիւ, Կիդրոնեան հեղեղատով և Եղիոնեան լերամբ: Երիքով, Մեռեալ ծով, Յորդանան և աւետարանական այլ սրբազն տեղեր տեսնելէն վերջը, մեծ փափաք զգացի տեսնելու և Ալրարածոց Գրոց սրբավեցրը, և ենելու անոր անեկանիլի բարձրութեան վրան: այն խորհրդական տեղին, յորում կը դնէ Աստուածաշունչ Գրոց հեղինակին երեակայութիւնը համաստրած ջրէն աղտատնաշապետը, զԵրց, իւր տապանով, սգուաւով: և աղտաւնեաւ, և ուր տեղ սերկեան մարդուս երեակայութիւնն կը կարձէ ցայսօր իսկ գտնալ՝ եթէ ոչ բուն տապանը, իրրեա արձան յիշատակի հրաշալի անսպառականութեան, ույլ գոնէ այն տեղը՝ ուր ներիմն կանգ առաւ:

Ես ես որոշեցի այս ամառ (1882) երթալ ի Փոքր Ամիան զԱլյարատ տեսնելու համար, և փորձելու վրան ենել, Բաց յայսմանէ, Ալրարատ տեսնելը՝ կը նշանակէ տեսնել այն տեղը, որոյ հետու թիւնն կապած է երկրորդ հայրենեաց գաղափարը, յետ կորուսանել:

(1) Զիտամուն ո՞ր Ա. Գրոց, և ո՞ր թարգմանութեան մէջ տառէ բազմաշմառաւ հեղինակն այդ վկացութիւնը, մէկ ծանօթ Ա. Գրոց մէջ որոշ յայստիւ չէ նախամարդոյն տեղուած աւել: Դարսանին գետերէն մակարելով, Հայսատան կը կարծէք մէք:

լոյն նախամարդոյն. առաջին խորհրդաւոր և հրաշալի հայրենիքը, այն է երկրաւոր դրախտը։ Տեսնել անձամբ այն տեղերը, ուր Նոյ զկնի ջրհեղեղին ենթերվ տապանէն, խոկոյն մատոյց գոհութեան պատարագ իւր ազատութեան համար, և ուր ի յիշատակ մեծ զիգուաւածոյն տնկեց առաջին որթը։ Բաց յայսցանէ! Արարատայ բարձրաբերձ գտափաթը ելնողին ընդ առաջ կը պարդի հորիզոնն անդր քան զշափ, ուստի կարիկ էր տեսնել մէկ նայուածով, իրրեղի թականը ըրջապատկերի մէջ զկովկաս և անդր քան զկովկաս, զիւսիսային Պարակաստան, զՓոքր Ալիոյ Տաճեաստան, և ի լրումն ամենայնի, զԱւ և Կասպից ծովս։

Հաստատ գիտէի յառաջնմէ, որ Արտարատայ ելքն մեծ գժուարութիւններ և վրտանգներ ունի, և այդ պատճառաւ յանգուգն զիւնոց մէջ թիշուորք համարձակած են, ինչպէս Ակթոնումոլ-Ափասի, և թէ բաղումք առողջութիւննին վստանգած են և այլք զիւնան զոհած։ Տեղացի Գուրդե, Պարսիկ, Թաթարլը և Հայք իրենց հոգեւորականներով, հաստատ գրած են ՚ի մտի, որ Աստուածանչի սրբազն լերին վրոյ ենել փորձելն՝ յանդուգն և աստուածընդդէմ գործ է, և ըմբռաւ կը պատօսին քրիստոնէից և Ալլահէ, ընդհանրապէս սաստիկ հողմով, որ կ'առնու կը զէ այդ յանդուգները, դեռ մերան կէսու չհասած, անդնդոյ մը մէջ։ Յառաջնմէ զիտէի են այդ ամեն բանն. զիտէի թէ ինչպիսի վտանգք կան առջևս. գիտէի թէ ինչպէս Խոժքոյ իրեններով 18օլին Արարատայ վրայ ըրջապատեալ է «ի մէջ սպառնալից ամպոց, իբրեւ յելեկտրական մարտկոցի հսկայական մեծութեամբ»։ ուր ո՞սձապտոյց փայլակն երեք կանգնաչափ լայն», ահռելի՛ քան, ահաւոր որտամարք, անընդհաս օդը ակօսելով, մեծամեծ ժայռեր կը թաւալէ եղեր։ Գիտէի, այո՛, այս ամենը, սակայն և այնպէս հաստատ միտքն զրած էի ի գլուխ տանել այդ վտանգավի մնուարկը, առանց ամեննեին ուշ գնելու բարեկամացն խրատուց, որոց սիրտը կը կարէր իմ ապագայ վիճակս։ Ճամբար ելնէլ առաջ քսան կարի կարգացի ըրլոր Արարատայ վրայ գրուածները։ մանաւանդ անոնցը որոնք սրբազն լեռը ելած էին քանիթեամբ, իտուող, Ակթոնումոլ Սփասարի,

Թէրէնս, Ազիխ, Խոճքոյ (1). Ընդհանրապէս հարուստ է Երանն մատենագրութիւնն, մանաւանդ երբ աչքի առաջ ու նենանիք գոյն, որ անցեալ գարու վերջերը միայն համարձակ եղան Եւրոպացւոց համոր այն ստէմանը, յորս կանդնած կեցած է հակացն լլ. Գրոց (2)։

Ազա փափաքելով ստանալ նորանոր տեղեկութիւններ զիս գրաւող առարկայինն, ոչ ՚ի գրոց զորս կարգացի, այլ ՚ի կինդանի ազգերաց, միանգամայն միտքս այն էր, որ հրապուրեմ և զայլս ի միասին երթալու հին կոտակարաննին սրբավայրը, զիմեցի ՚ի թիֆլիս առ Պ. Թիործեվսրի, տաղանդաւոր խմբագիրն վաղամեռիկ Փորաեց (Վալանց) օրագրի։ Նա հաղորդեց ինձ ուղած տեղեկութիւնը, որոյ երախտապարտ եմ. միանգամայն գրեց՝ որ ինքն ևս պատրաստ է ինձ ուղեկից ինելու, և թէ գտնուին թերեւ այլ փափաքողը ի թիֆլիս, ճանապարհին վտանգաց և այլ զգացմանց մասնակցի կամեցողը, կ'աւելցներ՝ թէ յարմարագոյն միջնցն մեծ լերան վրայ ենելու է 1-15 օգոստոսի և ոչ առաջ քան զի՞ յուլիսի։ Եւ եթէ անկարելի է այդ թիւթերէն առաջ լիւռ ելնելը, զի ծածկուած է մեծամեծ ձեան բարդերով, և ստէպ ձեան հիւր կը թաւալին և նապակաս են միրիկներ և սպառնալիք, Դարձեալ, անզատաման վերելը Պարսից հոգին սկսելու է, և մօտակայ Նոր-Կոսիր գեեցին 12 հոգի առաջնորդ վարձելու է, օրական 2 կամ 3 րուրդ տալով. ելնելու և ինելու չորս օր պէտք է. ի Պետրոպալէ գնելու է մթնագոյն ակնոցներ՝ ձեսն և արևոն անդրադարձ ճառագայթից վտանգաւոր ներգործութեանց առջեւ առնըրու և տեսազութիւնը պահպանելու համար. գարձեալ, պէտք է ունենալ կարի անթաց զգեստ, բանկոն, վարտիք և վերարկու, և լաւ զիտակ մի։

(1) Парротъ, Автономовъ Спасский, Теренсъ, Абихъ, Ходзъко.

(2) Ալրարատ ելնուներով անուանը, որով գրած է Երանն վրայ, ի թուառ ևն բառու Պարրոտъ, ինդէլսպարտ Ալլելցարդ, Ալլելցանց հայ մագիստրուու (որ թիր անցու կորուած է), Սփասիք Ալլուննուվ Սпасский Автономовъ, Ազիխ Աբихъ, Խոճք Խодзъко, Խոնիքով Խаниковъ. և յոյլ ազգերէ Դուբուա Տունելոր, Փէ-շըրեն Յոհան, Լոււ-շենդէտա Գուլդենստադ, Մորիշ Մորիշ, Քէր-Փորտը Կեր-Պուր, Շան-մեր Կ. Վ. Ռամեր, Ալև Մարգեն Տ. Մարտին, Հերման Հերման առ Մոնպերէյ Դубուա Մոնպերէ Վայուա.

Հասաւ ժամանակն հեռաւոր, և ինչպէս
վերջը պատահեցաւ, վտանգաւոր ճանա-
պարհորդութեան: Վերը զրեցի բարոյա-
կան շարժափթը, որ զիս զրդեց գետյան-
քարրատ վկայն մեծ պատահարին (ջրհե-
ղին): մանկութեան այդ լուսաւոր յիշա-
տակը չի մարիր տարիներով: Այլ կային
և այլ աւելի հարկապտահանջ շարժափթը:

Ո՞ր մտածող մարդը մեր վերջի ամաց հա-
ստակաց կենաց պարտասեցուցիչ հանգա-
մանօք չի տագնապիր: Ո՞վ ՚ի մէնջ այժմնան
գաղափարաց աշխարհին ապականած օգու-
վը, — եթէ կարելի է զրուցել այսպէս, ա-
ռանց մէկու մը զպչերւ, — չնշարգելու-
թեամբ չի վշտանար: Եւ ով չի փափաքիր
այդ ապականեալ օգը թողով, Նընել մա-
քուր օգոյ մէջ զիտնալունորչէ կարող ինքն՝
ապականնեալը յառողջարարի փոխելու բա-
զումք թողին գնացին որպէս զի չնշարգե-
լութեամբ չխոզուին: Թողի գնացի և ես
հեռու ՚ի տարարաց հայրեննաց, ևս ին-
ձեն խորչելով: Եւ յիրափ, կրկնակի փա-
խուստ էր, ի հայրեննաց և յանձնէս:

Անգոհ ինձ շրջապատող կեանքէն, ան-
գոհ անձիս վրայ, անգոհ այն ամենայն բա-
նէ.... (1) Այդպիսի զգացմունքներս հան-
դարտելու պատճառու Այրեկից ճանա-
պարհորդութեան ելոյ, ըրջեցայ ի Պատիս-
տին, յԵղիպտոս և յԱյրարատ: Ինձ այն-
պէս Կ'երեէր, այնպէս կը զդոյի, որ այն
օտար երկնից տակ, ընդ ճառատպայթիւք
հրասապ արեւուն բրգաց, և Երուսաղեմի,
Եհավայի բարկութեամբ այրած միհած ըլ-
լոց վրայ և հովտաց մէջ մոռունամ պիտի
իմ ճանճրոյթս, այն հոգեկան թափուր և
անգոհ վիճակը, որ ի հայրենիս կը մաչէր և
կը կրծէր իմ սիրուս:

Այսպիսի զգացմամբ և նմանօրինակ
զրդիուներով, Արարատի ճանապարհոր-
դութեան ձեռք զարկի: Որո՞ւ մորէն կ'ան-
ցնէր, որ այդ ճանապարհորդութիւնն այն-
պիտի տիտուր ելք ունենայ:

Հասկըցայ, այլ ուշ որ Արարատ ոչ
Ղրիմի Զատըրտաղն էր, և ոչ Խիսիսի
բուրգն:

(1) Յիշտակութիւն առնէ հեղինակն իւր դրուածոց,
որ հետաքրքրական շնու ոչ ուսու ընթերցողն:

Բ.

Ի թիֆլիսէ միևնէ Քարալայ (1) դաշտը:

Ելայ Պետքուրգէ ՚ի 24 յուլիսի, իմ հա-
շուով՝ օգոստոսի 2 կամ 3ին պիտի սկը-
սէի Արարատայ վրայ ենել, իսկ օգոստ 6
Վարդավառին օրը, միտքս զրած էի հաս-
նիլ. Ա. Գրոց լերին կատարը: Հարկան պի-
տի անցնէի ՚ի կովկասէ: Երկրիս այդ մե-
ծաշուք և գեղաստիպ անկիւնը ես ուրիշ ան-
գամես տեսած էի: Լերան գօտեաց վրայի
Վրաստանու կոչեցինը ճանապարհն որոր
գեց սրտիս մէջ այն հիացուցիչ զգացումը,
զոր կ'ունենաց մարզու գէմառգէմ ունենա-
լով բնութեան մէծավայելուց տեսարանը,
որոնց զիմանց շուարած միտքը տագնապաւ
կը խոնսարի: Այլ զիս իրեն ձգողն այդ
տեսարանը չէր:

Ոդոստոսի ծին ելայ ՚ի թիֆլիսէ Երևա-
նու ճանապարհաւ: կատրեցաւ պիրտս տես-
նելով զիս անոք և օտարական: Հեռաւոր
ճանապարհ մեկնելով ՚ի Պետքուրգէ՝
յանդուգն մտածութեամբ հասնիլ այն բա-
նին՝ որում ոչ ամեն մարդ կը համարձակի,
և որ սակաւուց պահուած է, չէի կարծեր
որ մինակուկ պիտի կարենամ անցնիլ այն
երկայն ճանապարհը, որ կը տանի կը հաս-
ցնէ մինչև առ նախաջրէ հղելեան նաւը,
որոյ նշխարին կոմը մատունքը որոնելով
գտնելով, պիտի բերէի ի Պետքուրգը բա-
րեկամոցս, որը երկիւ զախուան կը մազ-
թէին ինձ բարի ճանապարհ յուղն որու-
թիւն հին կտակարանին: Միտքս զրած
էի որ Պ. Խիսութենվսիի, մանաւանդ Պ. Ղու-
թին Երևանարդ և տաղանդաւոր հանճա-
րագէսն (ingénieur) ինձ ուղեկից պիտի
լինին, որոց յետինս արդէն շատ ճանապար-
հորդութիւններ ըրած է, և շատ կը փա-
փաքէր ենելի միասին ի լեռանն Ս. Գրոց:
Թէպէտ և նա պիտի երթար ի Պեսարա-
պիա: Տնեստեր գետոյն նաւագնաց ճանա-
պարհի բացման համար, այլ ինձ զրած էր
որ կանչաւ իմացըննմ իրեն որոշակի ժա-
մանակը՝ որ վերադառնութիւն թիֆլիս զիս
գտնէ: Բաց ի սոցանէ, կը յուսայի որ մեղ
կ'ուղեկից Պ. Ֆոն-Քոչբուլ լեռնային հան-

(1) Հեղինակն դրած է Քարաեւալ Կառալայ.

ճարագէտը՝ որ ի Թիֆլիս կը ծառայէր. ես բոլորովին վատահացած էի նորա վրայ, իր-
քեւ մասնագիտի, որոյ ծանօթ են լերանց
արհաւիրքն և վախք, որ արդէն եղած էր
Եւրոպից, Սփիոյ և Ամերիկեան լերանց
վրայ: ի գերեւ ելան այս յոյսերս: ինչպէտ
Պ. Թիորթեվսքի, Նոյնակէս Պ. Ֆոն-Քոչ-
քուլ չկարողացան ինձ ուղեկցիլ հակառակի
իրենց կամաց և ցանկութեան, հարկ եկաւ
նոցա մեալ ի Թիֆլիս, Նախանձեալ իմ իմ
վիճակիս. իսկ Պ. Լոխթին ռժդագար ճա-
նապարհորդելով աստ և անդ ի Գլուխարա-
սիս, ժամանակին ստացած չէր իմ նո-
մակս, այս պատճառաւ չհանդիպեցաց նմա-
ռչ ի Թիֆլիս և ոչ յէրեան:

Անկնեցայ ի Թիֆլիսէ զառն մտածու-
թեամբ, իրբեւ երեսէ ընկած որ, սակայն
առանց վախի: Այսավիսի արտակուրութիւն
չէր զգացած ոչ յէցիպտոս և ոչ ի Պալեո-
պին. այս աստիճանի չէին հասած իմ ա-
ռանձնութիւնքս այս տեղուանք. թէպէտ և
անոնք ես ինձ համար օտար և հեռաւոր
տեղիք էին: Ելայ Թիֆլիսէն թաթար կա-
ռավարիսն կետ, որ շատ յոտի կը խօսէր
ուսւերէն: 250 վերստ սուրհանդակի կա-
ռաք, վտանգաւոր ճանապարհը հարկ էր
կորել անցնիլ: ի Թիֆլիս զգուշացուցել
էին ինձ ճանապարհին վտանգաց. երբ կա-
յարանին մէջ ճանապարհազդիր ցուցընե-
լով ծիեր կր խնդրէի, — խոչեմաւ թիւնչէ ա-
սացին, առանց ուղեկցի ճանապարհ ենիլ:
խկ բարեխիրուն Պ. Ֆոն-Քոչքուլ պարզա-
րար ասաց, չէ թէ միոցն ի զիշերի չճանա-
պարհորդել, այլ և չմեկնիլ սուրհանդակի
հանգոյցներէն երեկոյեան դէմ:

— Եթէ ժամանակի խնայութիւն կ'ուզես
ընկը, լուսոյ գէմ՝ առաւօտուն ել հանգու-
ցէն և ոչ երեկոյին:

— Ի՞նչ պատճառի համար: հարցուցի:
— Այս պատճառաւ որ աւազակն երե-
կոյին չարութիւններ ընելով, զիշերը կը-
ռան փախչիլ և թարշիլ, այլ առաւօտեան
դէմ չեն համարձակիր:

— Լա՛ չարութիւններ:

— Այս... Այս տեղուանք մարդու կե-
նաց զինը...

— Սուլ չէ. հոխայ մի սինձ է:

— Գրեթէ:

Ասկայն իմ ճանապարհորդութիւնս ՚ի
կովկաս, չնորիկւ տեղացի պաշտօնա-
անարց ապահով եղաւ. որոց անուանքը կը

իշանակեմ խորին երախտագիտութեամբ,
Ստարուսելքի տեղապահ զօրավարն, քա-
ղաքական ընդհանուր կառավարիչն կով-
կասու, իշանավարի կովկասու ընդհանուր
ուսմանց խնամակալն, նամակատանց ընդ-
հանուր տեսուչն թոմիչ. որոց առաջինն
ինձ ծանուցազիր մի տուաւ առ պաշտօնա-
կալո, յօրում գրուած էր. « Խնդրեմ՝ ի տե-
ղացի պաշտօնակալաց, Ա. Ա. ուսումնա-
կան նորատակաւ. ՚ի Կովկաս ճանապար-
հորդողին՝ ցուցանել գործակցութիւն, և
պաշտպանութիւն յաջող և անվանեն ճա-
նապարհորդութիւն, ինչպէս կայարանաց
ճանապարհաց վրայ, նոյն և այլուր, առ-
լով ձիւսորներ նոհանգական պահանորդ-
ներէն, ուր կարեւոր է և անհրաժեշտ »:
ԱԱ ճանուցազիր յանձնեց ինձ Պ. Թոմիչ,
յորում կը ծանուցանէր. « Խնդրեմ Պ. Պ.
՚ի վերակացուաց հանգուցից ի վերայ ճա-
նապարհին ՚ի Թիֆլիսէ յէրեան և բոլոր
նահանգին մէջ գործակցից լինել յաջող և
անարգիլ ուղեկորութիւն Ա. Ա. (Չերտ
խոնարհ ծառայ) որ կը ճանապարհորդէ
ուսման նպատակաւ (ուր ուսումնական նը-
պատակ, պարզաբար անգործ - չըմլովիկ):
Վերակացուր կը պարտաւորին հանգուցից
մէջ զիշերօթիկ սենեակներն ըստ պատշա-
ճին կուել:

ԱԱ ՚ի վերայ այսրամեննայի, շփոթ մուռ-
ծութեամբ մեկնեցայ ՚ի Թիֆլիսէ, և երբ
քաշքէն դուրս ենիլով, առաւօտեան ո-
գոյն մէջ հնչեց կառացս զանգիկը, մոտաց
մէջ կը աարութերէր այս հարցը, թէ ար-
գեօք ինչ զգացմամբ պիտի վերագտանամ
այս բաժարա, և թիրես պիտի գտանամ
արդեօք անձանթ աշխարհէն:

ԱԱ միջոցիս քովիչ անցաւ գնաց եռա-
ձի կառք մի՛ զանգիկն հնչեցընելով և խճա-
քար ճանապարհին փոշին փոթորկելով, որ
կը տանէր ճերմակ հատուած սպակ մի՛ ճեռ-
քը հովանեակ: Առանց հովսնեակի անդր
կովկասեան գծոխտափա տարութեան մէջ
անկարիչի է ճանապարհորդին: սուրհան-
դակի կառքն ծածք չընին: Զարմանալին
այս է թէ ինչպէս կը զիմանայ այդ անտա-
նելի թերմութեան թաթար կառավարաց
գլուխը, որք ընդհանրապէս զիխարկաց
վրայէն թաշիլնակ մի կ'անցրնեն, որոց մե-
ծագոյն մասը ոչխարի մորթէ ահագին մե-
ծութեամբ գտակ կը դնեն, կինամոնի գու-
նով, որք շատ նմանութիւն ունին, ըստ մե-

ծոքեան և ձեռյան, Քամբուռ թափառական թափարաց սպալից ծածրին, կամ Մոսկովյացի Երանելոյն Բարսդի եկեղեցւոյ գմբեթաց, միայն վերի ծայրերն ճեղքած են Այլ ժողովուրդը առհասարակ ճերմակ դիմարկ կը զործածեն, այն պատճառաւ ամեն դուխանի մէջ տեսած հայդ՝ մեծ նմանութիւն կը բերէ պաշտօնէ Հրածարած սպայի: Գուխանի կ Կովկաս և յլաղը կովկաս՝ կը նշանակէ զինսեռուն, հիւրանոց, իջվան, և այլն: Ես ես ալեսորեալ ծերս՝ փոխելով Պետրուրդի բոյրածեն դիմարկս Թիֆլիսի ճերմակ գլխարկին Հետ, անշուշտ պաշտօնէ Հրածարեալ փորբիկ զնդապետի նմանեցայ:

«Հօս ախորժեի է ուտել և ըմպել». միտր կու գար Թիֆլիս դուխանի մի վրայ կարգացած վերասառութիւն, — և այդ փուն յիշատակարանն առ ժամանակ մի կը փարատէր տիուր մտածութիւններս: Սկամայ միտրս կու գալին կ. Պօլսոյ ևս Թիֆլիսի նման նեղ և անծուկ բարձմամարդ փողոցներն, յորոց նոր գուրու ելած էր: Հին արևելք կը պատկերանային աշացս զիմաց: Բայց ինչ որ չէի տեսած ոչ ՚ի Տաճկաստան, ոչ յեզիդոսո, ոչ ՚ի Պարստին, տեսայ ՚ի Թիֆլիս, — հին վաղեմի սովորութեամբ մորդու ծեծ քաշելը, — մինչդեռ այժմ ոչ ձիբը և ոչ չները այնպէս կը ծեծեն: Թիֆլիսի շուկային նեղ փողոցներէն անցնելով միջոցնիս, հարկ կը լինէր կէս կէս ժամ սպասնէ, ճամփաներն իրանած լինելով սայրեալ որոց լծուած մանեկաձեւ եղիւրներով գոմելը անխնայ կը ծեծէին սպալորդը: Կարծես այն միջոցին երկրէս բուսաւ ճերմակ Հազուած ոստիկանութեան պաշտօնեայ մի, գաւազան ՚ի ձեռին. պէտք է յաւելու, որ Թիֆլիսի սոտիկանութեան պաշտօնեալք Մոսկովյանէն աւելի բարեկարգ են, վի Մոսկովացի իրենց պաշտօնավարութեան միջաց միշտ արեածաղկի հատեր կը կրծեն, և եթէ հարցընես թէ Այս ինչ տուն որ կողմէ կ'ընայ, միշտ մերձակայ խանութը կը զրկեն տեղեկանալու: Թիֆլիսեցի սոտիկանութեան պաշտօնէից պակասութիւնն այս է միայն, որ շատ կը սիրեն, արելին բարեկամ ժողովրդեան հետ վարւած միջոցնին, ճեռաց գաւազանին ի գործ ածելու, ըստ աւանդութեան կիւրոսի և Կամբիւսի ժամանակաց: Նոյն միջոցին ՚ի հանդէս ելաւ այդ գաւազանդ, ոչ գոմել-

շին լոյն քամակը ծիծելու, այլ նոցա սոյ լրոցը. ոստիկանութեան պաշտօնեայն սառա ափկ ծեծեց սպալորդ մի, իրրե թէ օրինա ւոր գործ մի կատարէր: Զարմանալին որն է, — ծեծ ուտողը, ոչ կը բողոքէր, կ'ընդդիմանար և ոչ կը դժկամակէր, այլ խոնարդ հութեամբ կ'ընդունէր հարուածները, իր թէ այդ հարուածն ի վաղուց դրուած մի նէին Ալլունի դրոց մէջ, այդ Մուստաֆա յիդ կամ Այլ մէտիդ համար:

Թիֆլիս տակաւ կը կորսու էր կանանչ պարտիզաց մէջ և երբեմն երբեմն մասսան կ'երեւէր պղտոր և մինարդոյն կուրի եղիրը բարձրացած լիրանց միջնէն, Հեռանալով ևս զէպ յարեմուտ և հիւմիս, գորշագոյն կատարը կովկաս լիրանց հեռաւուրութեան միջնէն մէջ խառնուելով, անհարեւի կը լինէր զանազանել զայնս յամպերէն, որք Հորիգոնը կը պատին:

Ճանապարհս կուրի եղերքէն է. նորա պղտոր ջրերն ափանց վրայ մոնիմանի փըրփըրելով՝ ահազին մեծութեամբ անիւններ կը թաւալին իրենց վրայ, որով մեր կողմերը պարտէնիր կը ջրեն:

— Այդոնք ինչ են, հարցուցի թաթար կառուվարիս. շարժական ազօրեաց կը նըմանին:

— Ի՞նչ աղօրիք:

— Հօն, անիւք կը գառնան և կուրէն ջուր կը հանին:

— Այս Ալլահ խնձորենիները և որթերը կը ջրէ:

— Ի՞նչպէս. Ալլահ որթերը կը ջրէ:

— Կորի ինքնին անիւները գարձենելով կը ջրէ:

Եւ իրաւ է. Աստուած է այդ այգիների ջրողը. ահազին անիւններ, վրանին գոյլերով ինչաղէս հողահան մեթենային անօթերն, կուրի բռուն ընթացքով ինքեսնց վրայ կը թաւալին, և դոյլերը չուր հանելով՝ կը պարան քոյլերը գործած խողովակաց մէջ, որք պարտէնիները կ'իջեցընեն զնուրը:

Կուրի ափանց վրայ հօս հօն առանձին արևելան գէմէր կ'երեւին, և եռքերնին երկայն եղեգներ, որոց ծայրը բողորածեւ շըր ջանակներ անցուցած են:

— Դոքա ինչ կ'ընեն, հարցուցի:

— Երկայն գաւազաններով:

— Այսու. — Զնէկն կ'որսան.

— Զնէկն. շատ ձուկ կայ կուրի մէջ: Եղեգան ծայրի շրջանակին վրայ ուռա A.R.A.R. @

կան պատաճ լինելով, անով դիւրախար ձներ կ'որսան։ Կառքս հանգուցին մօտենալու վրայ էր, գարձեալ միտքս ինկաւ թիֆիխսի իմաստալից վերտառութիւնը « Հօս ամորժեիք է ուտեն և ըմպել »։ Սակայն այս ասել չեր որ ես ուտել կամ ըմպել ուղեմ՝ հաւանական էր որ հօն ուտելիք ևս չգանուէր, Յանկարծ միտքս ինկաւ մնայարգոյ լլ. կ. Դանիիելեանը, Աս և Կասարից ծովերն յրանցով միացընելու առջարիութեան հեղինակն։ Ոս լսերով իմ Արարատ ելնելու յանդուգն խորհուրդս, կովիսա ճանապարհորդ ելու մասին քանի մի օգտակար խրատներ տուաւ. և պատուիրեց, մահաբեր հիւանդութեանց առաջը առնըլու համար, երբէք լսա մը չկերած և շխմած տուաւաները ճամբայ չելնել։ Վասն զի, կըսէր, հօն հիւանդանալն և մեռնին անցպէս դիւրին է, ինչպէս ուրիշ տեղ հարրուվիս հանդիպիլն։ Եւ որովհետեւ ես թիֆիխսէն արեւուն հետ ճանապարհ ելայ, և անկարելի էր որ այն ատեն պատառիկ մի բան վոր երթայ իմ կոկորդէս, վասն որոյ իրիհուընէ պատուիրեցի պանդոկապեատին որ տապակել տայ ինձ, ճամբու պաշար, քանի մի հատ վառեակներ, որ երկրորդ օրը անոնցմով յիշեմ ճանապարհին իմ յարգելի Դանիիելեանու։ Ոչա այս պատճառաւ, հանգուցը տեսնելով, միտքս եկաւ իմաստուն վերտառութիւնը. « Արխորժեիք է ուտեն և ըմպել »։

Հօս հանգիպեցայ պապյին որ թիֆիխսի մօտ քովէս անցել զնացել էր, Նորա կառքը կը լծէին. պատուիրեցի որ իմն ևս լծեն և ճանապարհագիրս վերակացուին տուի որ ՚ի զիր սնցընէ, և ես վառեակներովս զրալցայ։

Հանգուցին վերակացուն ճանապարհագրերնիս դարձենելու ժամանակ շիփութեր էր, ինչ սպային և նորայն ինձ տալով։

Նշմարեցի որ սպայն երկրայանօք դէպինձ կը նայէր, Նորա կերպարանաց տիպարը կովկասեսն վրացւոյ էր. ամ'պ մարդկային գեղեցկութեան, ճնմ մազերով, ազուամաղ նորատէգ մօրուօք, զիմաց գծագրութիւնը ազնիւ և վայելուչ, զեղեցիկ աշքերով։ Մօտենալով՝ և ճանապարհագիրս տալով։

— Կերեցէք, այս ձեր ճանապարհագիրն է, սխալմամբ ինձ տուին։

Նայեցայ. իմն էր. « ի թիֆիխսէ ցԵ-

րեան, նոյնպէս վերագարձի համար. Արքունի խորհրդականին Մարտովցեվի, ուղեկցովն ՚ի միասին, տայ երկու ծի կառավարով, ճանապարհի ծախին ստանալով, առանց ուշացընելու »։

« Ուղեկցովն ՝ քանի տարօրինակ կը հնչէ մեզ, սովորելոցս ճանապարհորդել երկաթուղու, այդ նախաջրէն զեղեան բացատրութիւնը, — ուղեկցովն »։

— Զերն է, կարծեմ։

— Այս, իմն է ... Այս ևս հարկաւ ձերն է։

Բանալով սպային ճանապարհագիրը, մականուան նայեցայ, — գծուար չեր սըխոյից, զի նորա ևս մականունն իմինիս պէս Մորով կը սկսէր, Մորտուլածէ։

— Կերեցէք ... այդ գուք էր. հարցուց գեղեցիկ վրացին։

— Ես ինքն։

— Կերեցէք ... Այդ չեր հարցուցած ... Այդ ձեր մականունն է։

— Այս, իմն է, և ոչ կեղծեալ։

Ժպտեցայ. ծպտեցաւ և իմ խօսակիցս, — ինչ զեղեցիկ ատամներ։

— Ոչ ... ես կը հաւատամ ... իմ ասելիքս ... այդ մականունդ։

— Սեպհական իմ ճանապարհագիրս է, չ' կեղծեալ. — Կ'ուզն ցուցընեմ և անցագիա. այսպիսի ալեւորեալ մօրուօք, անվայել է ապօրինի գործ տեսնել։

Զուարթացաւ պատանին, մարգարտանըման ատամունքն փայլուն երկեցան։

— Ոչ. — տպագրութեան մէջ ձեր մականուն ... զուք։

— Այս՝ կը գուշակեմ։

— Զերն են այն ամենն։

— Դժբաղդաբար. իմն է ամենն։

— Միթէ. — « Մեծ հերձուածը », և ...

— Բոլորը, ինչ որ կարգացած ես ամենն։

— Հաստ ուրախ եմ. ինձ մեծապէս հաճոյական է զիանալ, որ ...

Եւ ասոնց նման այլ բացարարութիւնք մարգավարականք, վայելուչ կիրթ պատաւույ մի. editionis stereotypicæ, ad usum delphini.

Յայտնի եղաւ որ մեր պարոնն շատ կարգացող է, ունի շատ աեղեկութիւնս, և ընդհանրապէս եւրոպական կրթութեան ըրջանէն գուրս մնացած չէ. և ոչ միայն ուսւա՛ այլ և օտար մատենագրութեանց տեղեակի. Եւ այդ ուր տեղ. — յայնկոյս

Կովկասու, իբրանց մէջ, ուր իրենց հօտերով, վրաններով կը թափառին Մոնղոլ թաթարք, որդիիք մեր նախնեաց յաղթողներուն կալիի մօտ, որոնք և Վիրեի հրապարակաց մէջ արշաւեցին իրենց ձիերով թաթարյի հետ, ուր մեր նախնիք երկրագոտին կ'ընեին Պերուն և Դաժ-Բակ աստուածոց:

— Զուանովնստարան հիւսեմ՝ Հարցուց կառավար թաթարն:

— Անպատճառ. նայէ որ լու կապես :

— Կը չանամ:

Թզթատարական կառաց վրայ կը հիւսեն շրանէ նստարան, այդ փերեխիք (ուրութեամբ) ուսւ բառը, միշտ թաթար կառավարք այլանդակելով կը հնչեն:

Իմ և սպիտակի ակռաներով վրացւոյն կառքերը յծուեցան. և որովհետեւ նորա կառքն առջևէն պիտի երթար, և որովհետեւ թիֆլիսէ - Երեւան խճաքար ճանապարհն փոշելից էր տապագին արեւուն տակ, ամիսներով անանձրեւ մնալով, որպէս զի շինի թէ նոզգուիմ ես նորա ձիերուն սուքէն փոթորկած փոշւով, շատ աղաչեց վրացին որ առաջին կառքին մէջ նստիմ նորա հետ, և իմ կառքիս մէջ, որ ետեւն պիտի գար, իւր սպառաւորը կ'ուզէր նըսաւեցնէլ: Զհամաձայնեցայ նորա առաջարկութիւնը ընդունիլ. ետեւ ես մնալ չի ուզեր. առաջ անծանօթ և վասնգաւոր ճանապարհ էր. և ու և իցէ մարգու համար այդ ճանապարհով մինակ գնալը ախորժեցի բան մի չէ. իսկ ես չեմ կարող պարծիլ ոչ Շներգով պայտին քաջութեամբ և ոչ Դուբասով տեղապահին արութեամբ:

Ուրոշեցիք որ ետեւ ետեւ երթանք, այլ առաջին կառքը այնշատի միջոց տայ ետեւինին, որ փոշւոյ մէջ շխզդէ Մըրարատայ տարաբազդ պանդուխոր:

Կուը գետը ձախին թողղով, առաջ զնացինք դէպ 'ի լու: Մըր առջև բացուեցաւ ահաւոր գաշան կամ հովիտն Քարաչաց (Կարանց), (ուղիղը կարծեամ Կարաչայ պէտք է մինի), զոր՝ լու կը լինէր եթէ անուանէին «Հովիտ մահու»: — գոնէ այսպէս կոշեց զայն Պ. Մորտոււածէ, ցուցընելով ինձ արեւէն այրած մրկած տափարակին վրայ բարձրացած ըլուրքը, որոց երկու կալի՛ պատուար կանգնած էին կովկասեան և անդրկովկասեան հակայաձև լերանց գոտիները. որոց երկու կալի՛ պատուար կանգնած էին կովկասեան և անդրկովկասեան հակայաձև լերանց գոտիները.

Կանցնի, օձի նման, պրտորն կուր, իւր տամափափ կանաչութեամբ:

— Ինչո՞ւ կոշեցիր «Հովիտ մահու» հարցուցի:

— Անձամբ կը տեսնէր. սորա ինակիչըն են միայն թունաւոր մամուկներ, օձասանգրիներ և կարիճներ. մնացեալ ամենը լերանց մէջ իրենց ապաստանարան կը փնտրաւեն,

— Խսկ այդ բաղմաթիւ թոշումքն:

— Սակայն զիտեցէք թէ ինչ ցեղ թըռչուններ են. սորա միայն մարախով և սոզուններով կ'ապրին: Յիրաւի՛ առաջին վերսահերով տորածուած տափարակը շարագուշակ իմն կ'երևէր:

Գ.

«Հովիտն մահու»:

Որչափ որ ինձ ծանօթ է, մեր Անդր-կովկասու մատենագրութիւնը շատ աղքատ է: Կովկաս՝ բաղմացեղ լեռնորդեաց աշխարհը է ընդ մէջ վուլպանի և Թիֆլիսի, բաղմանովի և բանաստեղծական ճանապարհն Կովկաս լերանց վրայէն, պատերազմակոն-վրացի ճանապարհ կը կոչուի: Այդ ամեն լեռներն, — Մաշուքա, Բեշշառ, Ելրորուզ, Կաղեք, այն ամեն գետերն, գետակը և վլուակը, — թիրէր, Արագուա, կուր, Կումա, Փոդկումօք, սոքա ամենքը նկարագրուած և երգուած են հարիւր և հազար անգամ. զիանականը հատորներ գրած են կովկասու վրայ, բանաստեղծք՝ սկսեալի փուշինէ և լերմոնթովիէ մինչև ցԵնվշներոյ, ներշնչեալ սորա կախարդիչ և ահաւոր գեղեցկութեամբ, երգեցին այդ գեղօնքը, Ելրորուղի և կազզերի նման, սքանչելի և անմահ տողերովի: Կովկասու գեղովի կը յափշտակուէր և «Դեւ» (1) եթէ նմա կարելի լինէր թամարէն զատ այլոց գեղով յափշտակուէլ. մինչ

Ըզգագաթամբ կովկաս լերանց թաւերժ Թբախտին պատրական գնայր թըռչուցեալ թեատրած:

և 'ի ստորև ահաւորն կազրէր, նոյնպէս

(1) Լերմոնթովի գրան բանաստեղծութիւն մի:

յոխորտ և անհամբոյր, որպէս ահռելին
Արարատ

Փայլէր գեղավ յաւերժական։

Ո՞ւ մեզմէ փոքր տղայ հասակով զմայլած
չէ արտասանած, թէ ինչպէս

Ի ժողովի բազմամբոխ,
Այն էր, ժողով լեռնամրոխ,
Լեռտըն կաղրէ ընդ Շատ-լերին
Մեծամեծ վէճը յարուցին։

Ո՞ր Արքանիացին այլևայլ խորհրդածու-
թեանց մէջ շնչնիիր նոյն այդ Կովկասու-
րազդին և գեղեցկութեանց վրայ, կար-
գալով կուռած և կոկուած տողերը իւր սի-
րեցեալ պուէտին (Եւգէնիոյի), այդ լերան
ժայռից մէջ շցթայռած Պրոտէտէսոսի վրայ։

Լետոն ըզլերամբ պատեալ 'ի սառ...

Եւ միթէ հարի բաւոր պատերազմաց ստո-
րագրութեան միջոց, քիչ տեսարանք և
պատկերք զի՞թական աշխարհին կը բա-
ցուին մեր դիմաց։

Ընդհանրապէս Կովկաս մեզ ամենուս
աւելի ծանօթ է քան Պետրոսուրգի և Մոս-
կուայի նահանգքն իրենց անգոյն դիմաց։

Այլ այն Կովկասն, որ յայնկայս Կովկա-
սու զօտիին, Թիֆլիսէ այն զին, մեզ բռ-
լորովին անծանօթ է: Սակայն և այդ իրեն
համար զատ բոլորովին այլատարազ աշ-
խարհ մի է, զոր ոչ ոք քններ է, և ոչ ոք
ստորագրեր Ավակոսով մի ամենն ին նուու-
նու թիւն չունի մեր ճանչացած Կովկասին, և
բոլորովին զատ աշխարհ է: Ասրա ինքնա-
տարազ կեանքը, զիս ապշեցուց զարմա-
ցուց. ինչ որ ես հօն տեսայ՝ երեակայելու
անզամ կարող չէի։

Կը փափաքիմ ընթերցովիս տալ տեսա-
ծիս ուրուագիծն ՚ի Թիֆլիսէ յլԱրարատ
երթալուս միջոց, այլ կը վախաճոր շեմյա-
նողիր Ռայէս և իցէ, եթէ չի ճանձրանար
ընթերցովս իմ պատմութենէս, կը խնդրեմ
որ ինձ հետեւ, նախ վարաշայի անապա-
ռը, որ է՝ « Հովիտն մահու ». յետոյ գէպ
՚ի Տէլիքանու (Ձևուշան) երկայն Հովիտին
մէջ, համանուն գետոյն ափանց վրայ, որ
այնպէս գաշնակաւոր կը կարկաչէ իւր
քարուտ անկողնոյն մէջ, որ կարող է գե-
ղեցկութեամբն մրցիլ թերէքի և Արա-
դուայի հետ և գերազանցել քան զերկու-

սը. ապա բարձրանալ ծովուն երեսէն 7000
ոտք լիրան վրայ. և այդ բարձրութեան վր-
այ դիտուլ նոր ծով մի, Գէօք-չոյց. Հօն
երկու ամիս միայն ամռա կը լինի, մնա-
ցեալ ժամանակը միշտ ցուրտ է. ուր ռուս
աքսորականիք՝ Մըղոքաններն կը բնակին,
մուսանալով իրենց ոչ մայրը, այլ մօրուն,
զանցամրոյցն իտուսատան. որ տարա-
գրեր է զնոսա իւր ծոցէն, միայն այն պատ-
ճառի համար՝ որ նոքա իրենց խելքով կը
մտածեն: Այսոնցմէ վերջն անցնելով Ե-
րասիայ հարաւատ հովտէն կը հասնինք Ար-
արատայ ստորոտաղ, ուր, ըստ աւանդու-
թեան, յետ համաշխատրհական ջրհեղեղին
գտած է մարզս տեղի բնակութեան, և ա-
պա անտի ցրուած ընդ ամենայն կողմն աշ-
խարչի ազգ մուրգկան։

Եւ ահա մեր զիմացն է Փոյրաչոյ ան-
տապասն: Այդ բըրովք ծածկեալ տափարա-
կը, սէտք էր որ լինէր ամբարանոց բոլոր
Անդր-կովկասու, և կերակրել այլ կարու-
տեղուանք. մեծաւ մասամբ սորա խաւերը
